

ԴԱՍԸՆԹԱՅ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությամբ դպրոցում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Գևորգյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի երաժշտական հ.13 հատուկ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

| | |
|---|----|
| 1. Ներածություն----- | 3 |
| 2. Բնապահպանությունը որպես մարդության գլխավոր հիմնախնդիր ----- | 4 |
| 3. Բնապահպանական խնդիրները և դրանց հետևանքները----- | 5 |
| • Հանքարդյունաբերություն ----- | 5 |
| • Անտառների հատում ----- | 6 |
| • Գունավոր մետաղաձուլություն ----- | 7 |
| • Քիմիական արդյունաբերություն ----- | 8 |
| • Զբոսաշրջություն ----- | 8 |
| • Օդային ու ջրային ավազաններ ----- | 8 |
| • Սևանի էկոլոգիական խնդիրները ----- | 9 |
| • Ռազմական գործողությունների հետևանքները ----- | 9 |
| 4. Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա ----- | 12 |
| 5. Բնության պետական պահպանություն ----- | 13 |
| 6. Բնապահպանության կրթությունը և դաստիարակությաունը դպրոցում----- | 14 |
| 7. Եզրակացություն ----- | 16 |
| 8. Օգտագործված գրականություն ----- | 17 |

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Մարդկության տունը Երկիր մոլորակն է, որն այսօր խնամքի և պահպանության կարիք ունի: Էկոլոգիական դաստիարակությունն ու էկոլոգիական կրթությունը ներկա ժամանակներում գոյապահպանման պահանջ է: Այսօր մասնագետները կարևորելով էկոլոգիական կրթությունը կատարում են բազմաթիվ հետազոտություններ: Կրթական տարբեր ոլորտներում ներառված է էկոլոգիական կրթությունը , որի նպատակն է ձևավորել էկոլոգիական գիտակցություն : Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ:

2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Էկոլոգիական բնույթի գործողություններում մարդու մոտ ձևավորվում են աշխարհի մասին ընդհանուր պատկերացումներ, որոնց շնորհիվ նա ճշգրտում է իր տեղը բնության մեջ: Այս գործընթացում կարևոր դեր է խաղում անձի «մարդկբնություն-հասարակություն համակարգի մասին եղած հայացքների համակարգը, որտեղ վճռական և կարգավորող գործոնն անհատի արժեքային վերաբերմունքն է: Բնության և հասարակության միջև եղած ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը պահանջում է ներդաշնակ զարգացած անհատի դաստիարակությունը, որն իր հերթին պահանջում է աշխարհայացքի էկոլոգիականացում: Էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացման համար կարևոր դեր է խաղում անձի ակտիվ կենսադիրքորոշումը, որը միայն բնության մասին եղած որոշակի հայացքների միասնությունը չէ, այլ գոյություն ունի հարցի առարկայական կողմը, և այն անառարկելիորեն առնչվում է մարդու անմիջական գործունեության հետ՝ կապված մարդ-բնություն-հասարակություն համակարգում եղած փոփոխությունների օպտիմալացման հետ:

3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հանքարդյունաբերություն

Հանքարդյունաբերական գործունեությունը դժվարին բնական պայմաններում, բարձր ռիսկայնությամբ և ներդրումների երկար ժամանակահատվածով իրականացվող գործողություններ են: Ուղղակի հարուստ հանքային պաշարներ ունենալը և այդ ռեսուրսները որպես հումք արտահանումը բավարար չէ երկրների զարգացման համար: Այս ռեսուրսները պետք է արտադրվեն և վերափոխվեն վերջնական արտադրանքի՝ արդյունաբերության մեջ օգտագործելու համար: Անկախ ոլորտից, արդյունաբերական օբյեկտները բացասական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա: արագ զարգացող երկրներում շրջակա միջավայրի վրա գործունեության բացասական ազդեցությունը նվազեցնելու համար կազմվում և ստուգվում են անհրաժեշտ իրավական կարգավորումները: Մեր երկրում արտադրության և շրջակա միջավայրի միջև հավասարակշռություն հաստատելու տեսանկյունից իրականացվել են իրավական կարգավորումներ: Մեր երկրում իրազեկությունն աճում է բնական միջավայրը պաշտպանելու և բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու վերաբերյալ: Հանքարդյունաբերության ոլորտում չպլանավորված, չպլանավորված արտադրությունը և միայն փող աշխատելու համար վնասում են բնական միջավայրին և մարդու առողջությանը: Անհրաժեշտ է իրականացնել ձեռնարկված միջոցառումները, իրականացնել իրավական ստուգումներ և շահագործել հանքավայրերը գիտության և տեխնիկայի պահանջներն ընդգծող ըմբռնումով: Հանքարդյունաբերության գործունեության ընթացքում քիչ թե շատ թափոններ են առաջանում՝ կախված շահագործման եղանակից, տարածաշրջանի գտնվելու վայրից և երկրի ընդերքի ձևավորումից: Մինչ այդ թափոններից ոմանք թթու թափոններ են, ոմանք հարստացման թափոններ են: Այնուամենայնիվ, հանքարդյունաբերության թափոններն ունեն իրենց առանձնահատկությունները և հատուկ մշակման կարիք ունեն: Բնապահպանության և քաղաքաշինության նախարարության կողմից տրված լեռնահանքային թափոնների կանոնակարգը, հանքավայրերի հետախուզման, արդյունահանման, պատրաստման և

հարստացման ընթացքում առաջացած թափոնները, կարգավորել կառավարման սկզբունքները այնպես, որ մինչև ոչնչացումը չի վնասի շրջակա միջավայրին և մարդու առողջությանը: Մեր կազմակերպությունը նաև ծառայություններ է մատուցում բնապահպանական խնդիրների համար `արդյունաբերական դժվարությունների դեմ ուղղված ծառայությունների շրջանակներում: Այս ծառայությունների շնորհիվ բիզնեսը արտադրում է ավելի արդյունավետ ` բարձր կատարողականությամբ և որակով ` անվտանգ, արագ և անխափան կերպով: Արդյունաբերական դժվարությունների դեմ ուղղված ծառայությունների շրջանակներում մատուցվող բնապահպանական խնդիրների ծառայությունները մեր կազմակերպության կողմից այս ուղղությամբ մատուցվող ծառայություններից միայն մեկն են: Բացի դրանից, ծառայություններ են մատուցվում նաև արդյունաբերական շատ այլ մարտահրավերների դեմ:

Անտառների հատում

Անտառների անկանոն հատումների պատճառով շատ կաթնասուններ (օրինակ ` կզաքիսը, հնդկական մացառախոզը, գորշ արջը, մուֆլոնը, անտառային կատուն և այլն) լքել են իրենց բնական կենսավայրերը: Հայաստանում անտառները պետական սեփականություն են, և պետությունն է ապահովում անտառների պահպանությունը, օգտագործումը, վերականգնումն ու նոր անտառային տարածքների ստեղծումը: Օրենքով անտառահատում թույլատրվում է միայն անտառվերականգնման, սանիտարական և խնամքի նպատակներով:

Անտառում աճում են բույսերի և ծառերի բազմաթիվ տեսակներ, որոնք մեծ նշանակություն ունեն մարդկանց համար: Անտառապատ տարածքների կրճատման հետևանքով մթնոլորտում պակասում է O2-ի քանակը, որի հետևանքով ավելանում է CO2-ի քանակը և տեղի է ունենում կլիմայի տաքացում: Ջարգացող երկրների բնակչության ավելի քան 70%-ն օգտվում է ավանդական դեղամիջոցներից, որոնցից կեսից ավելին ստացվում են անտառային բույսերից:

Անտառապատ տարածքների կրճատման հետևանքով ուժեղանում է հողերի էրոզիան, անապատացումը, քայքայվում է բնական էկոհամակարգը, ավելանում են երաշտները: Ուժեղանում է ջրային հոսքը, ավելանում է ջրհեղեղների քանակը:

Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային գետերի ու ջրամբարների տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրագրական ռեժիմը: Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավասեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ: Սկսվում է անտառային հողերի կենսահամակեցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝ բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գաճաճ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում սխեմայով:

Գունավոր մետաղաձուլություն

Հանրապետության գունավոր մետաղաձուլության արտադրական թափոնների ծավալը ջրային ավազաններում հասնում է մինչև 200 միլիոն մ³, իսկ թունավոր թափոնները 1980-ականների վերջին կազմել են շուրջ 18 հզ. տ. Դրանց պարունակությունը, մասնավորապես Ալավերդու տեխնաձին գոտում, սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցել է շուրջ 20-40 անգամ: Իսկ «Նաիրիտ» ԳԱՄ-ի ուժեղ աղտոտման գոտում բույսերի տերևների վրա նկատվել են քլորոզ, մեռուկացում, աճի և զարգացման դանդաղում, ծաղկավիժում և այլն:

Նաիրիտ, արհեստական կաուչուկ արտադրող գործարան Երևանում, հիմնվել է Խորհրդային Միությունում 1940 թվականին, և նախկին ԽՍՀՄ երկրների և ներքին շուկային մատակարարել է մոտ 34 տեսակի քիմիական արտադրանք:

Ֆտորը, որն արտանետվում է այլումինի գործարաններից, հատկապես ազդում է ծիրանենու վրա. պտուղները չեն հասունանում, պնդանում են, չորանում ու դառնահամանում են: Սեւ եւ գունավոր մետաղների հիմնական սպառողը մեքենաշինությունն է, որը առանցքային դեր է խաղում արդյունաբերության մեջ: Այն ընդգրկում է բազմաթիվ ենթաճյուղեր ու արտադրություններ, որոնք տարբեր տեսակի մեքենաներ եւ սարքավորումներ են մատակարարում տնտեսության բոլոր ճյուղերին: Առավել կարեւոր են մեքենաշինության տրանսպորտային, հաստոցաշինական, սարքաշինական, գյուղատնտեսական, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային,

սարքաշինական, էներգետիկական ճյուղերն ու ենթաճյուղերը: Մեքենաշինության առաջացրած աղտոտվածությունը և վնասները ամենա շատն է և վտանգավորը:

Քիմիական արդյունաբերություն

Հայաստանում և հատկապես Երևանում խորհրդային տարիներին քիմիական արդյունաբերության գերկենտրոնացման և դրա վտանգավոր հետևանքների դեմ համաժողովրդական պայքարի ալիք բարձրացավ 1980-ականների վերջին: Այդ ալիքի ճնշման տակ փակվեցին հանրապետության քիմիական արդյունաբերության հսկա «Նաիրիտ» ԳԱՄ-ը (1990), ՀԱԷԿ-ը (1991) և այլ ձեռնարկություններ: Չնայած հետագայում հարկ եղավ դրանք վերաբացել, բայց նաև հաջողվեց հանրապետությունում առաջին պլան մղել բնապահպանական խնդիրները և խթանել բնապահպանական կազմակերպությունների ստեղծումը

Ջրոսաշրջություն

Բնաշխարհին զգալի վնաս են հասցնում նաև անկազմակերպ զբոսաշրջությունը, բուսական պաշարների (դեղաբույսեր, սնկեր և այլն) չկարգավորված հավաքն ու օգտագործումը, որոնց հետևանքով զանգվածաբար ոչնչանում են բուսական ու կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ, շրջակա միջավայրն աղտոտվում է կենցաղային աղբով և այլն: Այս խնդիրների լուծման ամենաարդյունավետ եղանակներից մեկը բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության բարելավումն է, մարդկանց մեջ բնական միջավայրի հանդեպ հոգածու վերաբերմունքի մշակումը:

Օդային ու ջրային ավազաններ

Աղտոտված են նաև օդային ու ջրային ավազանները: Կան ջրավազաններ (օրինակ՝ Դեբեդ և Ողջի գետերի), որոնց ջրային բուսական ու կենդանական աշխարհները խիստ աղքատացել են գետը թափվող արդյունաբերական ջրերից: Իրենց բացասական ազդեցությամբ աչքի են ընկնում արդյունաբերության հատկապես մետաղաձուլական և քիմիական ճյուղերը:

Չնայած վերջին շրջանում դրանց ծավալները զգալիորեն նվազել են, սակայն երկրի լանդշաֆտներին ու կենսաբազմազանությանը հասցրած վնասը զգալի է:

Մթնոլորտն աղտոտող ձեռնարկությունների բաշխվածության տեսակարար ցուցանիշը ըստ մարզերի Մարզ Տեսակակար կշիռը ՀՀ-ում, %Երևան35.7 Արագածոտն7.3 Արարատ8.8 Արմավիր6.8 Գեղարքունիք3.0 Լոռի11.3 Կոտայք8.6 Շիրակ8.0 Սյունիք4.9 Վայոց Ձոր3.2 Տավուշ2.6

Ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման ուղղությամբ ընդունված են մի քանի որոշումներ, որոնցից մեկը վերաբերվում է կապարային միացություններով էթիլացված բենզինի արտադրության, օգտագործման և ներմուծման արգելմանը:

Սևանի էկոլոգիական խնդիրները

«Եթե Սևանի մակարդակը բարձրանա, ջրի տակ են մնում 2770 հա անտառ, Բացի այդ, ջրի տակ են մնում 18 կմ էլեկտրահաղորդման համակարգեր և 19 կմ գազատար, որոնք բոլորը տեղափոխվելու են»

Վերացել են Սևանի իշխանի ձվադրավայրերի հիմնական մասը, բազմաթիվ ջրլող ու չվող թռչունների, կաթնասունների տեսակները: Սևանա և Արփի (անցյալում նաև Գիլլի) լճերն անփոխարինելի դեր ունեն ոչ միայն հանրապետության ճահճային թռչունների պահպանության, այլև հարևան երկրների ջրային ավազանների հետ օրգանական կապի պահպանման առումով, որով ապահովվում է հանրապետության տարածքում 145 տեսակ ջրլող և առափնյա թռչնատեսակների գոյությունը:

Ըստ բանախոսի, մաքուր ջուր ունենալու նպատակով ուշադրության են արժանի նաև կենսաբազմազանության հարցերը՝ ֆլորայի, ֆաունայի ձկնապաշարների խնդիրները

Ռազմական գործողությունների հետևանքները

Հոկտեմբերի 30-ի գիշերն ադրբեջանական ուժերն Արցախի անտառային տարածքներում, որտեղ խաղաղ բնակիչներ են պատսպարվում, կիրառել են Ժնևյան կոնվենցիայով արգելված և քիմիական զենքի տարր համարվող սպիտակ ֆոսֆոր պարունակող զինատեսակ:

Սպիտակ ֆոսֆորը կարելի է բնորոշել երեք բառով՝ թունավոր, բնկվող, քայքայիչ:

Սպիտակ ֆոսֆոր պարունակող զինամթերքի կիրառման դեպք անտառային տարածքներում գրանցված չի եղել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ի գիշերը:

Արցախի գրեթե բոլոր շրջաններում վնասվել է ընդհանուր շուրջ 1815 հեկտար անտառապատ տարածք: Հաշվի առնելով զինատեսակի առանձնահատկությունները, այս թիվը կարող է աճել նույնիսկ եթե այն այլևս չշարունակվի կիրառվել:

«Արտահերթ զեկույցը վեր է հանել առնվազն հետևյալ փաստերը՝ անկախ կիրառված զինատեսակի քիմիական տարրերի կոնկրետ տեսակներից.

- 1) կիրառված զինատեսակն ունի զանգվածային ոչնչացման բնույթ,
- 2) այն պարունակում է քիմիական տարրեր,
- 3) զինատեսակը կիրառվում է անտառների նկատմամբ և առաջացնում է զանգվածային հրդեհներ ու երկարաժամկետ ծանր վնաս շրջակա միջավայրի համար,
- 4) այս զինատեսակի առաջացրած հրդեհը չի մարում անգամ այն մարող նյութերով կամ ջրով՝ ըստ մասնագիտական գնահատականների,
- 5) անտառները, որոնց նկատմամբ կիրառվել են այս նյութերը, գտնվում են քաղաքացիական բնակավայրերն անմիջականորեն մոտ,
- 6) ըստ փաստահավաք աշխատանքների՝ անտառներում ադրբեջանական զինված հարձակումներից պատսպարվում են նաև խաղաղ բնակիչներ, որոնք հավանաբար տուժել են այս զինատեսակի կիրառումից,
- 7) այս զինատեսակի օգտագործումը քաղաքացիական օբյեկտների դեմ արգելված է միջազգային իրավունքով և կարող է հանգեցնել պատերազմական հանցագործության»,
- ասված է օմբուդսմենների համատեղ զեկույցում»:

Մինչ այդ պատմությանը հայտնի միակ դեպքը, երբ սպիտակ ֆոսֆորը կիրառվել է անտառներում, եղել է պատահականության արդյունք: 2016 թվականին Գերմանիայի Ուիտստոք քաղաքում 1993 թվականից չգործող զենքերի գործարանից արտահոսել էր նյութն ու անտառային զանգվածային հրդեհների պատճառ դարձել՝ խլելով մոտ 56 հա տարածք:

Ոչ անտառներում, բայց ռազմական գործողությունների ընթացքում առաջին անգամ չէ, որ այն կիրառվում է՝ Աֆղանստան, Պաղեստին, Իրաք, Լիբանան, Սոմալի, Ուկրաինա, Եմեն և այլուր: Վերջին տասնամյակում այս տարածքներում բախումների ժամանակ սպիտակ ֆոսֆոր պարունակող զինամթերք կիրառվել է: Հետևանքները աղետալի ու երկարատև կարող են լինեն: Ի դեպ՝ Ամերիկայի քիմիական ընկերակցության տվյալներով՝ այսօր աշխարհում արտադրվում է տարեկան շուրջ 900.000 տոննա սպիտակ ֆոսֆոր, բայց ոչ մարդկության դեմ կիրառելու համար: Դրա մեծ մասն օքսիդացվելով՝ դառնում է ֆոսֆատ և լայնորեն կիրառվում պարարտանյութերի, թունաքիմիկատների, պլաստիֆիկատորների ու անասնակերի սննդային հավելումների արտադրության մեջ: Այն որքան վտանգավոր է բնության համար, նույնքան էլ մարդու: Սպիտակ ֆոսֆորը մարդու մարմնի հետ շփվելիս կարող է այրել այն՝ մինչև ոսկոր: Նույնիսկ համեմատաբար աննշան այրվածքները հաճախ մահացու են լինում: Ֆոսֆորի այրման ջերմաստիճանը 1200 աստիճան է, այն ակնթարթային հալեցնում է այն ամենը, ինչ կա ձեզ վրա՝ ներառյալ մաշկը, իսկ եթե անմիջականորեն էպիկենտրոնում եք, նաև ամբողջ մարմինը: Դա է պատճառը, որ սպիտակ ֆոսֆոր պարունակող զենքերը պայթեցվում են գետնին մոտ, որպեսզի հնարավորինս նվազեցվի դրանց հետագա վտանգավոր ազդեցությունը: Սպիտակ ֆոսֆորի՝ ռազմաօդային ճանապարհով քաղաքացիական ենթակառուցվածքների վրա օգտագործումն արգելված է Ժնևի կոնվենցիայով:

4. ՄԱՐԴՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎՐԱ

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի: Որպես օրինակ՝ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները՝ այն դարձնելով սրճարաններ կամ զվարճանքի վայրեր: Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների քանակը չափից դուրս շատացել է, ինչպես նաև ոչնչանում են այդ տարածքներում ապրող կենդանիների տեսակները:

Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել Արաքսի հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողունաշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մողեսը:

Վերջին 50 տարիների ընթացքում կիսաանապատային և տափաստանային տարածքների ակտիվ յուրացման հետևանքով իրենց բնադրավայրերից դուրս են մղվել զանազան թռչուններ, մեծ, փոքր և գեղանի արոսները, սևափոր դռլոնը, կանաչ մեղվակերը: Տեղի է ունեցել ջրաճահճային էկոհամակարգերի ոչնչացում: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով մերկացել են առափնյա ժայռերն ու մերձափնյա հատվածը, չորացել շրջակայքը:

5. ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում բնօգտագործման և բնապահպանական հարցերը կարգավորում է պետությունը. ՀՀ ԱԺ-ը, իր ընդունած օրենքներից բացի, վավերացնելով համապատասխան միջազգային համաձայնագրեր, միանում է դրանց և պատասխանատվություն ստանձնում երկրում այդ համաձայնագրերի պահանջների իրականացման համար: Երկրում բնապահպանական խնդիրները լուծելու, կենսաբազմազանության պահպանության ու կենսապաշարների խելամիտ օգտագործման նպատակով մշակվում է նաև ՀՀ կենսաբազմազանության պահպանության ռազմավարություն: Այն խիստ բազմակողմանի ու ծավալուն փաստաթուղթ է, որը ներառում է ինչպես բնաշխարհի վրա մարդահարույց վնասակար գործոնների նվազեցման, էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների ներդրման, էկոլոգիական կրթության ու գիտության զարգացման, հատուկ պահպանվող տարածքների ցանցի ընդլայնման, այնպես էլ այդ ոլորտի օրենսդրական դաշտի հետագա ամբողջացման ու կատարելագործման հարցեր:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Բնապահպանական խնդիրների լուծման համար բավարար չէ բնօգտագործման գործընթացների իրավական և տնտեսական կարգավորումը, այլ անհրաժեշտ է մարդկային գործունեության մեջ նոր արժեքանորմատիվային հարաբերությունների յուրացում, որը հնարավորություն է ստեղծում էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման համար: Կարելի է ասել, որ դաստիարակությունը կոչված է ոչ միայն անցյալի արժեքները փոխանցելու, այլև դպրոցականներին 4 նախապատրաստելու ապագայի ստեղծագործական ընկալմանն ու կերտմանը: Դաստիարակությունը առաջին հերթին պետք է ապահովի համապատասխան ունակությունների, արժեքային կողմնորոշումների, վարքագծի և բնություն աշխարհի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը:

Դաստիարակությունը դպրոցում կազմակերպում են ակտիվ ուսուցման մեթոդներով: Դասի կազմակերպման հիմնական ձևը տեսական և գործնական պարապմունքներն են: Ուսուցման ձևերից են՝ արտադասարանական պարապմունքները, միջոցառումները, արշավները, էքսկուրսիաները, բուսաբանական և կենդանաբանական այգիները, արգելավայրեր և արգելոցներ: Տարրական դասարաններում երեխաները էկոլոգիական գիտելիքներ ստանում են շրջակա միջավայր, մայրենի լեզվի դասերի ընթացքում: Ավելի բարձր դասարաններում բնագիտությունից, իսկ յոթերորդ դասարանից սկսած՝ կենսաբանությունից, քիմիայից, ֆիզիկայից, աշխարհագրությունից: Ցածր դասարաններում երեխաները մշակում են սենյակային բույսեր, սովորում են՝ ինչպես մշակել ծաղկամանում իրենց աճեցրած բույսերին: Նրանք ջրում են բույսերին, ազատում են մոլախոտերից, ցողում են ջրով, պարարտացնում են, փխրեցնում են հողը: Երեխան տեսնում է իր մշակած բույսի աճն ու զարգացումը, առաջին ծաղիկների բացվելը, պտուղների զարգացումն ու հասունացումը, սկսում է սիրել բույսերին ու բնությունը: Ձևավորվում է սեր՝ գեղեցիկի նկատմամբ, ցուցաբերում է հոգատար վերաբերմունք իր և ուրիշի աշխատանքի նկատմամբ:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը սովորում է ուսումնական առարկաների՝ բնագիտության, բուսաբանության, կենսաբանության, աշխարհագրության, գրականության և այլ առարկաների միջոցով:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով:

Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում կազմակերպում են ակտիվ ուսուցման մեթոդներով: Դասի կազմակերպման հիմնական ձևը տեսական և գործնական պարապմունքներն են: Ուսուցման ձևերից են՝ **արտադասարանական պարապմունքները, միջոցառումները, արշավները, էքսկուրսիաները, բուսաբանական և կենդանաբանական այգիները, արգելավայրեր և արգելոցներ:**

Երեխան տեսնում է մշակած բույսի աճն ու զարգացումը, առաջին ծաղիկների բացվելը, պտուղների զարգացումն ու հասունացումը, սկսում է սիրել բույսերին ու բնությունը: Ձևավորվում է սեր՝ գեղեցիկի նկատմամբ, ցուցաբերում է հոգատար վերաբերմունք իր և ուրիշի աշխատանքի նկատմամբ:

Բնության և հասարակության միջև եղած ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը պահանջում է ներդաշնակ զարգացած անհատի դաստիարակությունը, որն իր հերթին պահանջում է արժեհամակարգի ձևավորում:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը և ամբողջ աշխարհը այսօր կանգնած են բնապահպանական լուրջ խնդիրների առաջ: Այս խնդիրների լուծելու համար պետք է սկսնք դաստիարակել և՛ մեզ, և՛ մեր եկող սերնդին:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա առանձնահատկությունները.

ա) բազմատեսանկյունությունը

բ) համալիրությունը

գ) անձնային-անհատական բնույթը:

Այսպիսով էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակման, դա էլ իր հերթին հարստացում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը: Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում:

Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն :

Այդ գիտելիքները երեխանների մեջ զարգացնում են ուսումնասիրելու, հետազոտելու կարողություններ: Ինչպես պարզվեց, և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները կարևորեցին արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիանների դերը էկոլոգիական դաստիարակության հարցում: Հարցումներ կատարելուց հետո համոզվեցի, որ արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիանների անցկացումը շատ կարևոր է աշակերտների էկոլոգիական դաստիարակության համար:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Science and National Geographic [Science \(nationalgeographic.com\)](http://nationalgeographic.com)

Khan Academy [Science | Khan Academy](http://Khan Academy)

Պաշարների շտեմարան [Պաշարների շտեմարան \(armedu.am\)](http://արմեդու.ամ)

Internet searches

Իրատես թերթ - [Ֆաքթթր լրատվանիշոց- \[Ասատրյան Լ.Թ., Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս., //Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում//, Երևան, 2003թ.:\]\(http://Ծայրահեղ վտանգավոր. ֆուֆորային զինատեսակների սարսափելի հետևանքները. ՏԵՍԱՆՅՈՒԹ | Ֆակտոր տեղեկատվական կենտրոն \(factor.am\)</p></div><div data-bbox=\)](http://Աղբբեջանը, քստ ՀՀ-ԼՂ օմբուդսմենների համատեղ զեկույցի, հրկիզող զինատեսակ է օգտագործել Արցախի քաղաքացիական օբյեկտների և անտառների դեմ (irates.am)</p></div><div data-bbox=)

Ասատրյան Լ.Թ., //Էկոլոգիական դաստիարակության հիմունքները//, Երևան,